



## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Երկարատև և ծանր հիվանդությունից հետո, 1954 թվականի մայիսի 9-ին, ի Տեր Հանգավ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ Նորին Ս. Օծովթյուն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը: Վեհափառի դառնակալիթ մահվան գուժաբեր հեռագրերը տարածվեցին ի Սփյուռք աշխարհի: Սուրբ մեջ մտավ Հայ Եկեղեցին աշխարհի բոլոր ծայրերում և ամենուրեք:

Թաղման օր է նշանակվել մայիսի 27-ը, որպեսզի հեռավոր ու մոտիկ վայրերից Ս. Էջմիածին կարենան հասնել պատգամավորները: Արդեն Մայր Հայունիք են ժամանել Սովետական Միության բազմաթիվ քաղաքներից թեմակալ առաջնորդներ, քահանաներ, աշխարհիկ և հոգևոր պատվիրակներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ինչպես նաև այլադավան վրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

\*\*\*

Մայիսի 21-ին Երևան ժամանեցին Ռուսական Ռողափառ Եկեղեցու պատվիրակները, Մինսկի և Բելուստիայի արքեպիսկոպոս Պիտերիմ սրբազնի նախագահությամբ: Պատգամավորության կազմի մեջ են Սիլովի և Կույբիչևի եպիսկոպոս Հերոնիմը և ավագ քահանա Զերոնիլը:

Օդանավակայանում նրանց դիմավորեցին Մայր Աթոռի միաբանության ներկայացուցիչները, գերազնոր Տ. Մահակ եպիսկոպոսի պիտակությամբ:

\*\*\*

Մայիսի 22-ին Երևանի կայարանում Վրացական Եկեղեցու պատգամավորությանը տիմավորեցին Մայր Աթոռի միաբանության անունից Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը, Գեորգ ծայրագույն վարդապետ Վալյանը, բարեխնոր Ռուբեն և Մարգիս սարկավագների ընկերակցությամբ:

Վրացական Եկեղեցու պատգամավորությանը գլխավորում էր Նինոցմինդայի եպիսկոպոս Դիմիտրին: Պատվիրակության կազմի մեջ էին ավագ քահանա Ալեքսանդր Կառավարան և Վրաց Կաթողիկոսի քարտուղար Պ. Գագաշիձեն:

\*\*\*

Մայիսի 23-ին Մայր Հայունիք ժամանեցին Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու Նվիրապետական Աթոռների և արտասահմանյան թեմերի պատգամավորները: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի պատգամավորությանը գլխավորում էր անձամբ Կաթողիկոսական տեղապահ ամենապատիվ Խաչ արքեպիսկոպոս Աշապահյանը: Պատգամավորության կազմի մեջ էին Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը, Գևել ծայրագույն վարդապետ Յերենցյանը, Շահն արքովա Աճեմյանը, Սիմոն Սիմոնյանը («Համեկ-ի խմբագիր), բանաստեղծ Վահե Վահանը, Գեորգ Զաթարպաշյանը, Պողոս Անթույանը Եղուսաղեմի Հայոց Պատրիարքությունը ներկայացնուած էին Տ. Հայրագում վարդապետ Արքահամանն ու Տ. Հայրիկ վարդապետ Արքանյանը: Ռումինահան պատգամավորությանը գլխավորում էր Տ. Վաղեն Կապուտպատության վրա Վահելիս և դրկու: Գրիգոր Բամբուկցյանի մասնակցությամբ: Հյուախային Ամերիկայի թեմը ներկայացնուած էր առաջնորդական փոխանորդ Տ. Մամրեն արքեպիսկոպոս Գալֆայանը: Հարավային Ամերիկայի թեմերի ներկայացուցիչն էր Հայրապետական պատվիրակ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանը: Մայր Աթոռ Վահելիս գլխավորության մասնակիցների հայոց Արևելյան թեմի նախակիոն առաջնորդ գերազնոր Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը: Դամասկոսից ժամանել էր կաթողիկոսական փոխանորդ Տ. Շավարշ վարդապետ Գույումճյանը: Ֆրանսիայից ժամանել էր հայությունի գլխավորությամբ:

Երևանի օդանավակայանում արտասահմանյան պատգամավորներին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանության ներկայացուցիչները: Միաբանության անուանը Տեղորդ ծայրագույն վարդապետ Վաթյանը վշտի և արտագույն խոսքերով դիմեց պատգամավորներին: Վշտակից եղայրներ և հարազատներ, — ասաց Հայր առլրը, — տարիներ հետ նորից աք ուտք զնում Դուք մեր ծաղկուն Հայրենիքը: Թերևս Զեկանից շատերը Հայմնիք են գալիս առաջին անգամ, բայց այս անգամ կտիճն ու վիշտն են Զեղ րերից: Հայ Եկեղեցին ծով վշտի մեջ է, Նակորցել է իր արթուն Հովվապետին, Հայ Հավատացյալը՝ իրեն մսիթարողին ու պաշտպանին, իսկ Մայր Աթոռի միաբանությունը՝ իր սիրելի Հորը: Հեռավոր վայրերից Նկել եք բաժանելու Հայ Եկեղեցու մեծ վիշտը: Արդպիսով Դուք կիսած կլինեք և թիթեացրած՝ մեր միաբանության վիշտը»: Պատասխան խոսքով հանգեստ եկավ Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ ամենապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս Ազարահյանը՝ թարգմանը հանդիսանալով Սփյուռքի ողջ հայության խորոնկ վշտի: Հյուրերը տեղափակեցին «Ինտուրիստաց հյուրանոցում: Նույն օրը նրանք մեկնեցին Ս. Էջմիածին՝ «Հոգտոց» ասելու հանգույցալ Վեհի հոգու համար: Վեհարանում նրանց դիմավորեց գերազնոր Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանդնուպոլիսի որին իրենց վշտակցությունները հայտնեցին պատվիրակության բարձրապատիվ անդամները:

\*\*\*

Մայիսի 27-ին, Հինգշաբթի օրը, տեղի ունեցավ Հանդուցյալ Վեհափառի մարմնի օծուածք և հուղարկավորությունը, որը մանրամասն նկարագրված է ներկա համարում տպագրած «Ամենայն Հայոց երջանկահիշատակ Կաթողիկոս Տ. Տ. Գուդարիքավորությունն ու թաղումը» խորագույն հոդվածում:

\*\*\*

Մայիսի 29-ին, Վեհափառի թաղումից հետո, Վեհարանում տեղի ունեցավ Գերագույն Հոգմոր Խորհրդի: և եպիսկոպոսական համատեղ ժողովի նիստը, որին մասնակցում էին նաև վարդապետները, սարկավագները և աշխարհիկ պատգամավորության անդամները:

Նույն նիստում բացվեց հանգույցալ Վեհափառի կտակը:

Գերագույն Հոգմոր Խորհրդի նախագահող գերազնոր Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանդնուպոլիս ժողովում կարդաց երջանկահիշատակ Հայրապետի առաջն թվականի ապրիլ 30-ի կտակը, որով Վեհափառը Կաթողի-

կոսական տեղակալ էր նշանակում երրուսաղմբի Հայոց Պատրիաքական տեղապահ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտուրյանին: Կոնդակի ընթերցումը լսվեց Հուտընկայությունը Հետո ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտուրյանին ուղարկվեց հետևյալ բովանդակությամբ հետագիր:

«Եպիսկոպոսական ժողովում կարգացվեց երքանգահիշատակ նորին Սրբության կոնդակը, որով Դուք նշանակված եք Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղակալ: Գերագույն Հոգմոր Խորհրդությունը և պատգամավորությունը սպասում են Ձեր անմիջական պատասխանին»:

Ժողովի վերջում հուտնկայս երգիկ «ԷՇ Միաժինն ի Հօրէ» շարականը:

\*\*\*

Մայիսի 30-ին, Երկրորդ Մարդկագարդի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ լուսարար մատուցեց Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ գերազնոր Տ. Վահանը: Մայր արքեպիսկոպոս Սփյուռքի ողջ հայության խորոնկ վշտի: Հյուրերը տեղափակեցին «Ինտուրիստաց հյուրանոցում: Նույն օրը նրանք մեկնեցին Ս. Էջմիածին՝ «Հոգտոց» ասելու հանգույցալ Վեհի հոգու համար: Վեհարանում նրանց դիմավորեց գերազնոր Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանդնուպոլիսի որին իրենց վշտակցությունները հայտնեցին պատվիրակության բարձրապատիվ անդամները:

Տաճարը լի էր խուներամ բազմությամբ: «Հայր մեր»ից առաջ սրբազնը քարողեց: Նա իր քարողի մեջ մատնանշեց այն մեծ լուսը, որ թողեց երջանկահիշատակ Հայոց պետն իր մահով: «Հայ Եկեղեցին, մանավանդ այսօր, կարիքն ունի միասնականության և միախորհության, — ասաց սորագունը: — Վշտի այս ծանր օրերուն մենք ավելի ևս պիտի սերտացնենք Սփյուռքի մեր տարագիր ժողովուրդին կապը մեր Մայր Երկրի և Հայաստանյաց Առաքելական Եկեղեցիի դարավոր ու պատմական կեդրոն Ս. Էջմիածնի հետո:

\*\*\*

Հունիսի 3-ին, Հինգշաբթի օրը, հանգույցալ Վեհափառ Հայրապետի լոթնօրեքին, Մայր Տաճարում, Ավագ սեղանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ: Օրվա պատարագին էր գերազնոր Տ. Վահագին եպիսկոպոս Պարգևանը: Տաճարը լի էր բազմությամբ: Դասում երգում էր Մայր Աթոռի քառաձայն երգեցիկ խումբը: «Հայր մեր»ից առաջ, պատարագի սրբազն հայրը բովանդակալից քարողով վեր հանեց հանգույցալ Հայրապետի կյանքն ու գործունեությունը, նրա նվիրվածությունը Հայ Եկեղեցուն, Մայր Հայրենիքին ու ժողովուրդին: Վերջում սորագանն ասաց. «Մի՞թե մենք թաղեցինք Վեհափառը: Ան մեր մեջն է, Անոր Հոգին մեզի հետ է, մեզ կուղեկցի՝ ա'լ ավել սիրելուն զիրար և իր սուրբ գործը շարունակերուա:

Սուրբ պատարագը ավարտվելուց հետո ամբողջ հոգեկորականությունը «Անսկիզբն Աստուած» շարականի վսեմ հնչուններով դուրս եկավ Տաճարից և բոլորվեց հանգուցյալ Հայրապետի թարմ շիրմի շուրջը, որը դարդարված էր անուշաբույր ծաղիկներով։ Կատարվեց յոթնօրիեփի կարգը։

Ե՛վ պատարագին, և հանգստյան արարողություններին ներկա էր ուժտավորների մեծ բազմություն։

\*\*\*

Հունիսի 6-ին, Հոգեգալստյան մեծ տոնի կապակցությամբ, Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս ներսոյանը։ Տաճարը լին էր հավատացյաներով։ շարժվելու հնարավորություն չկար։ Սուրբ պատարագի ավարտից հետո, սրբազնը հոգեզում քարոզ ասաց։ Նա պարզ ու գեղեցիկ փոսքերով բացատրեց Պենտեկոստեի—Հոգեգալստյան նշանավոր տոնի խոշոր նշանակությունը ու խորհուրդը՝ հավատացյալի ու Հայ Եկեղեցու կյանքում։

\*\*\*

Արտասահմանյան եկեղեցական մյուս պատգամավորներն ևս պատարագեցին և քարոզեցին Երևանի բոլոր եկեղեցիներում, Հոգեկորապես միսիթարելով Մայր Հայրենիքի հավատացյալ հայ ժողովրդին։

\*\*\*

Հունիսի 14-ին, սրբոց կուսանացն Հոփիսիմյանց տոնի օրը, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց Մ. Հոփիսիմեի վանքում։ Պատարագին էր բարեկրոն Տ. Կոմիտաս արելա Տ. Ստեփանյանը։ Տաճարը լի էր հավատացյաների բազմությամբ։ Այդ օրը Երևանից և շրջակա գյուղերից բազմաթիվ հավատացյաներ ովատի էին եկել։

Պատարագին ներկա էր Մայր Աթոռի ողջ միաբանությունը։

Մ. Հոփիսիմեի և իր նահատակ ընկերուհիների գերեզմանը զարդարված էր ծաղիկներով։ Բազմաթիվ մոմեր առկայժելով լուսավորում էին ստորերկրյա մատուռը։

Պատարագի ընթացքում երգուած էր Հոգեվոր Ճեմարանի երգեցիկ խումբը։

«Հայր մերայից առաջ, գերաշնորհ Տ. Մահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը հավուր պատշաճի բարոզեց, բնորոշելով մեծ լուսավորի կյանքն ու նվիրական գործունեությունը։ Քրիստոնեությունը, — ասաց նա, — հայ ժողովրդի համար հանդիսացավ բարոյական ու կրթական խոշոր գործոն՝ նրա ամբողջ գոյության ընթացքում»։

\*\*\*

Հունիսի 15-ին, սրբոց կուսանացն Գայանյանց տոնի օրը, հավատացյալների խոտն բազմությամբ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց Ա. Գայանի վանքում։ Օրվա պատարագին էր բարեկրոն Տ. Մկրտիչ քահանա Գամաղելյանը։ Ներկա էր Մայր Աթոռի միաբանությունը։

Պատարագի ընթացքում հավատացյալները մեկ առ մեկ իշնում էին ստորերկրյա մատուռը և համբուրում վարդերով ու ծաղկեներով զարդարված կույսերի գերեզմանը։

Պատարագի վերջում կատարվեց հոգեգալնականավան կարո՞վ վանքի գավթուած թաղված կաթողիկոսների հոգու փրկության համար։

\*\*\*

Հունիսի 17-ին, «Ա. Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին» եկեղեցական տոնի կապակցությամբ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց Ա. Շողակաթի վանքում։ Պատարագին էր բարեկրոն Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Պատարագի վերջում հավատացյալների ներկայությամբ հոգեհանգիստ կատարվեց համորեն ննջեցելոց հիշատակին։

\*\*\*

Հունիսի 19-ին, շաբաթ օրը, Ա. Գրիգոր Լուսավորչի վիրապից ելնելու եկեղեցական հանդիսավոր տոնակատարության կապակցությամբ, սուրբ պատարագ մատուցվեց Մայր Տաճարում, Ա. Իշման սեղանի վրա։ Պատարագին էր բարձրապատիվ Տ. Գեորգ ծայրագույն վարդապետ Վաթյանը։

«Հայր մերայից առաջ պատարագից հայրը հավուր պատշաճի քարոզեց, բնորոշելով Հայաստանյաց աշխարհի մեծ լուսավորի կյանքն ու նվիրական գործունեությունը։ Քրիստոնեությունը, — ասաց նա, — հայ ժողովրդի համար հանդիսացավ բարոյական ու կրթական խոշոր գործոն՝ նրա ամբողջ գոյության ընթացքում»։

Հավատացյալները քարոզը լսեցին մեծ ուշադրությամբ։

\*\*\*

Հունիսի 20-ին, Մայր Տաճարում, Ա. Իշման սեղանի վրա, Կաթոպլիկե Ա. էջմիածնի տոնի կապակցությամբ մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագին էր գերաշնորհ Տ. Մահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Երգում էր Մայր Տաճարի քառածայն երգեցիկ խումբը։

Այդ օրը միաժամանակ երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ. սիլեցյալ Հայրապետի մահվան քառասունքն էր: Հարկան ուսապուղիկաներից, Հայաստանի բոլոր շրջաններից եկել էին բազմաթիվ հավատացյալներ, ովտապվորներ և այցելուներ: Պատարագի ժամանակ Տաճարում շարժվելու տեղ չկար:

«Հայր մերակ առաջ պատարագի սրբազնան հայրը քարոզում է հավուր պատշաճի Բնորոշելով Մայր Աթոռ Ս. էջմիածնի ղարերով կատարած առաջընթաց ու բարերար դերը հայ ժողովորդի կյանքում, սրբազնը վերցացրեց իր խոսքերը հետեւալ բառերով: Ա. էջմիածինը, սիրելի ժողովով՝ վրա, հայ հավատացյալ ժողովորդի նվիրական սրբավայրն է: Այսօր արդին 40 օր է, որ էջմիածինը մնացել է որբ, մնացել է առանց Գահակալի: Սգի օրեր են ապրել Հայ Եկեղեցին և Մայր Աթոռի միաբանությունը առանց սիրեցյալ Հայրապետի: Մանը է մեր կորուսաը և հեշտ չէ այն դարմանելլը: Սակայն աղոթինք ամենաբարձրյալ Աստծուն, որ նա մի նոր, իմաստուն, արժանընտիր Գահակալի արժանացնի սրբազնը ու նվիրական Գահին»:

Պատարագից հետո, Մայր Աթոռի միաբանության մասնակցությամբ, զուրսը, երջանկահիշատակ Հայրապետի թարմ շիրմի մլրա, որը ծածկված էր երփներանգ ծաղկներով, կատարվեց թաղման քառասունքի հոգեհանգտյան կարգը: Թարմ հողակուստի վրա վառվում էին չորս կերպներ: Ժողովուրդը շրջապատել էր հանդուցյալ Հայրապետի գիրքմանը:

Արարողություններից հետո, գիրաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոնսունյանի գլխավորությամբ, Մայր Աթոռի ողջ միաբա-

նովիոնը հավաքվեց Վեհարանում միաբանական մի սեղանի շուրջը: Ներկա էին նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի աշխարհական անդամները, ինչպես նաև հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Ավետիք Խսահակյանը:

Սեղանի շուրջը խոսվեց հանգույցյալ Հայրազետի հոգեկան բարձր արժանիքների մասին, պատմվեցին հիշողությունները: Կոչ արվեց միաբանությանը էլլ ավելի համախմբվելու Մայր Աթոռու շուրջը և խոսվեց նրա անելիքների մասին:

Կերպում առաջարկվեց Մայր Աթոռ Ս. էջմիածնի հարատևության կենացը. ապա, հոտնկայս, միաբանությունը երգեց ու շուրջը միաբանության ի Հօրէ» շարականը:

\*\*\*

Հունիսի 5-ից սկսվեցին Հոգևոր ծեմարանի տարեկերջի քննությունները: Սաները մեծ շանասիրությամբ պատրաստվել էին քննություններին: Տարեկերջի այս քննությունները մի անգամ ևս ցուց տվեցին, որ սաները, իրենց ուսուցիչների բարեկիրդ աշխատանքի շնորհիվ, մեկ տարվա ընթացքում ձևոր են բերել բավարար գիտելիքներ ուսման ասպարեզում, հետամուտ են եղել իրենց գիտական և կրթական պաշարի բազմակողմանի հարստացմանը: Մի քանի քննությունների ներկա էին նաև արտասահմանից Վեհափառ Հայրապետի թաղմանը մասնակցելու եկած Հյուրերից ոմանք: Քննությունների ընդհանուր արդյունքները գոհացուցիչ են:

Հունիսի 21-ից սաները ստացան իրենց ամառային արձակուրդները և մեկնեցին իրենց հարազատների մոտ՝ հանգստանալու

